



*ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ*

*ՎԱՂԱՐՇԱՊԱՏ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2022 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒՆՎԱՐԻ 18-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ԹԻՎ 3 ՆԻՍ*

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 3
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀՈՒՆՎԱՐԻ 18-Ի
ԱՐՏԱՀԵՐԹ ԹԻՎ 3 ՆԻՍՏԻ

2022 թվականի հունվարի 18-ին ժամը 12:00-ին Վաղարշապատ համայնքի ավագանու նստավայրում՝ քաղաք Էջմիածին, Մբ.Մ.Մաշտոցի փողոց 0 հասցեում տեղի ունեցավ Վաղարշապատ համայնքի ավագանու արտահերթ թիվ 3 նիստը, որին մասնակցում էր Վաղարշապատ համայնքի ավագանու 23 անդամ, հիմք ընդունելով գրանցման արդյունքները՝ այդ մասին հայտարարեց նիստն արձանագրողը:

Վաղարշապատ համայնքի ավագանու արտահերթ թիվ 3 նիստին հրավիրված էին համայնքային կառույցների ներկայացուցիչներ, համայնքապետարանի աշխատակիցներ:

Նիստը վարում էր համայնքի ղեկավար Դիանա Գասպարյանը:

Նիստը արձանագրում էր Գ.Հարությունյանը:

Նիստն սկսվեց Հայաստանի Հանրապետության հիմնով և Էջմիածին համայնքի հիմներով:

Նիստն անցկացվում էր առցանց հեռարձակմամբ:

Նախագահողը՝ համայնքի ղեկավարը, ավագանու անդամներին ներկայացրեց նիստի օրակարգի հարցերը և առաջարկեց քննարկել դրանք ու հաստատել օրակարգը:

Օրակարգի նախագիծը դրվում է քվեարկության:

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 23 անդամ

Քվեարկության արդյունքները՝

կողմ – 23

դեմ – 0

ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

ՈՐՈՇՎԵՑ – Հաստատել Վաղարշապատ համայնքի ավագանու 2022 թվականի հունվարի 18-ի արտահերթ նիստի օրակարգը և քննարկել առաջադրված հարցերը, այն է՝

1. ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒՅՔԱԶԱԾԵՐԸ ԵՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՈՒՂԵՐԶ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2022Թ. ԲՅՈՒՋԵԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

3. ԷԶՄԻԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2021Թ. ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

4. ՈՍԿԵՀԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2021Թ. ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

5. ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՄԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԼՈՒԾՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՍԵՓԱԿԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ ԶԱԾՈՐՈՇԻՉՆԵՐԸ ՄԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

6. ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի ԹԻՎ 10 ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԹԻՎ 2 ՀԱՎԵԼՎԱԾԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

7. ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի ԹԻՎ 11 ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԹԻՎ 2 ՀԱՎԵԼՎԱԾԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՅՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

8. ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ ՀՈԱԿ-ՆԵՐՈՒՄ 2022Թ ՈՒՄՄԱՆ ՎԱՐՁԵՐԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

9. ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՆԿԱՊԱՐՏԵՋ ՀՈԱԿ-ՆԵՐՈՒՄ ԵՐԵՄԱՆԵՐԻ ԽՆԱՄՔԻ ՀԱՄԱՐ ԳԱՆՁՎՈՂ 2022Թ ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐԻ, «ԵՂԺԵ ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳԵՂԱՐՎԵՍԻ ԴՊՐՈՑ» ՀՈԱԿ-ՈՒՄ 2022Թ. ՈՒՄՄԱՆ ՎԱՐՁԵՐԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

10. ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԱՆՁԻ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂԻ ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆՈՆԱԳԻՐՔԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

11. ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի ԹԻՎ 17 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

12. ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

13. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՌԱՋԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 1-ԻՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՄԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վաղարշապատ համայնքի ավագանին ընդունեց թիվ 19 որոշումը:

Օրակարգի 1-ին հարցի առթիվ՝ զեկույցը ներկայացրեց Գրիգոր Հարությունյանը:

Ներկայացնելով Վաղարշապատ համայնքում տեղական տուրքերի և վճարների 2022 թվականի դրույքաչափերը և արտոնությունները սահմանելու մասին նախագիծը:

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր տալու համար ավագանու անդամները հերթագրվեցին: Հարցերը տալու համար ըստ հերթագրման հաջորդականության՝ նիստը վարողը հայտարարեց հարց տվողների անուն և ազգանունները՝ Սևակ Խաչատրյան և Ռուբիկ Ենոքյան:

Սևակ Խաչատրյանը խնդրեց պարզաբանել պաղպաղակի բացօթյա առևտրի դեպքում սահմանված տուրքի դրույքաչափի գոյացումը:

Պարզաբանում ներկայացրեց Դ. Գասպարյանը:

Պարզաբանվեց, քանի որ կիրառվել է «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված 0,5 գործակիցը:

Հարց: Ռուբիկ Ենոքյան. ինչպե՞ս է որոշվում վաճառքի ամենօրյա լինելը:

Պատասխան: Դ. Գասպարյան. համայնքապետարանի համապատասխան աշխատակիցը ժամանակ առ ժամանակ այցելություններ է կատարում և արձանագրում պաղպաղակի սառնարանների առկայությունը, ինչպես նաև յուրաքանչյուր տնտեսվարող մինչև առևտուրը սկսելը ստանում է թույլտվություն:

Հարց: Սևակ Խաչատրյան. արդյո՞ք բարձրացել են մանկապարտեզների և երաժշտական դպրոցները վարձավճարները:

Պատասխան: Դ. Գասպարյան. մանկապարտեզների և երաժշտական դպրոցներ վարձավճարների չափը չի բարձրացվել, մնացել են այդպիսի տարվա սահմանված չափով, չնայած նրան, որ համայնքի ծախսերը ավելին են, քան գանձվող գումարները:

Ավագանու անդամների մտքերի փոխանակման և հարցի քննարկման ավարտից հետո, նախագահողը առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության:

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 23 անդամ

Քվեարկության արդյունքները՝

կողմ - 23

դեմ – 0

ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

Վաղարշապատ համայնքի ավագանին ընդունում է թիվ 20-Ն որոշումը:

Օրակարգի 2-րդ հարցի առթիվ՝ զեկույցը ներկայացրեց Լուսինե Քալաշյանը:

Ներկայացնելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վաղրշապատ համայնքի 2022 թվականի բյուջեն հաստատելու մասին նախագիծը:

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր տալու համար ավագանու անդամները հերթագրվեցին: Հարցերը տալու համար ըստ հերթագրման հաջորդականության՝ նիստը վարողը հայտարարեց հարց տվողների անուն և ազգանունները՝ Սևակ Խաչատրյան, Կարինե Միքայելյան և Ռուբիկ Ենոքյան:

Հարց: Սևակ Խաչատրյան. հողի հարկ բյուջեով նախատեսվել է 50 000 000 ՀՀ դրամ, համեմատելով նախորդ տարիների հետ, այս տարի հողի հարկի մասով սահմանվել է ավելի պակաս գումար:

Պատասխան: Կարեն Սմբատյան. 2021 թվականին օրենսդրական փոփոխության արդյունքում գույքահարկը և հողի հարկը միացվել են և դարձել է մեկ՝ անշարժ գույքի հարկ և այս տարի հողի հարկ ասելով հասկանում ենք միայն գյուղատնտեսական նշանակություն ունեցող հողամասերը:

Հարց: Սևակ Խաչատրյան. այս տարի դրոշմային մոտ 20 000 000 ՀՀ դրամի չափով նվազե՞լ է:

Պատասխան: Լուսինե Քալաշյան. դրոշմային պետական հատկացում է և այս պահին հատկացումը կազմում է բյուջեում նշված չափով:

Պատասխանը լրացրեց Կարեն Սմբատյանը. Ենթադրաբար դոտացիայի նվազեցումը կապված է նրա հետ, որ անշարժ գույքի հարկը 2021 թ.-ի համար հարկվում էր 25 տոկոսի չափով, իսկ 2022 թ.-ին 30 տոկոսի չափով, հետևաբար համայնքի եկամուտները հավանաբար ավելանում են, իսկ դոտացիան նվազեցվել է:

Հարց: Սևակ Խաչատրյանը. հատուկ նպատակների տողով նախորդ տարի սահմանվել էր 35 000 000 ՀՀ դրամ, իսկ այս տարի 25 000 000 ՀՀ դրամ, ինչու՞ է նվազեցվել:

Պատասխան: Լուսինե Քալաշյան. դա նախատեսվում է օրինակ՝ տանիքների, շենքերի պահպանման համար, և տարվա ընթացքում այդ գումարի չափը վերահաշվարկվում է և փոփոխվում է:

Սևակ Խաչատրյանը հարցրեց. Արդյո՞ք կան այս տարի ծրագրեր շենքերի վերանորոգման համար:

Նիստը նախագահողը պատասխանեց, որ նպատակ կա վերանորոգել և կապիտալ նորոգել Ոսկեհատի և Էջմիածնի թիվ 14 մանկապարտեզները:

Հարց: Սևակ Խաչատրյան. անշարժ գույքի իրացման մասով արդյո՞ք պլանավորվել է ինչ գույքեր են վաճառվելու:

Պատասխան: Դիանա Գասպարյան. Քաղաքաշինության և հողաշինության բաժինը ամեն տարի ներկայացնում է գույքերի վաճառքի սխեմա, անցյալ տարի ավագանու որոշմամբ գույքեր կան որոնք դրվել են աճուրդի: Այս տարի ևս ունենք ծրագիր և հուսով ենք կապահովենք նախատեսված մուտքերը:

Հարց: Կարինե Միքայելյան. Հայտարարվել է, որ Էջմիածնի թիվ 13 մանկապարտեզում արդեն իսկ կատարվել է վերանորոգում համայնքապետարանի և բարերարների կողմից: Ճապոնիայի կողմից տրված դրամաշնորհը ուղղվում է նույնպես Էջմիածնի թիվ 13 մանկապարտեզին, ինչու՞ և ի՞նչ աշխատանքների համար են դրանք նպատակաուղղված:

Պատասխան: Դիանա Գասպարյան. անհրաժեշտ է վերանորոգել մանկապարտեզի երկրորդ մասնաշենքը:

Հարց: Ռուբիկ Ենոքյան՝ հոսանքի ծախսի ավելացումը ի՞նչով է պայմանավորված:

Պատասխան: Դիանա Գասպարյան. հոսանքի ծախսի ավելացումը պայմանավորված է ավելի հզոր լամպերի պատճառով, նոր մարզադպրոցի բացմամբ, համայնքապետարանի շենքում օդորակիչների ավելացման պատճառով, ինչպես նաև ներառվել է Ոսկեհատի վարչական շենքի լուսի ծախսը:

Ավագանու անդամների մտքերի փոխանակման և հարցի քննարկման ավարտից հետո նախագահողը առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության:

Հարց: Ռուբիկ Ենոքյան՝ Ինչու՞ է աշխատավարձի ֆոնդը ավելին համեմատած հաստիքացուցակների:

Պատասխան: Լուսինե Քալաշյան՝ քանի որ տրվում են հավելավճարներ, հղիության և ծննդաբերության արձակուրդի վճարներ, պարգևավճարներ, որոնք ներառված չեն հաստիքացուցակներով նախատեսված գումարների մեջ:

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 23 անդամ

Քվեարկության արդյունքները՝	կողմ - 22
	դեմ – 0
	ձեռնպահ – 1

Որոշումն ընդունվեց ձայների մեծամասնությամբ

Վաղարշապատ համայնքի ավագանին ընդունում է թիվ 21-Ն որոշումը:

Նիստը նախագահողը հայտարարեց ընդմիջում 10 րոպե: Ընդմիջումից հետո նիստն սկսվեց ժամը 14:00-ին, որին մասնակցում էին ավագանու 27 անդամից 24 անդամ, ընդմիջումից հետո ներկայացավ ավագանու անդամ Անդրանիկ Կարապետյանը:

Լուսինե Քալաշյանը ներկայացրեց համայնքի ղեկավար Դ. Գասպարյանի՝ բյուջեի հաստատման վերաբերյալ համայնքի ավագանու ուղերձը:

Օրակարգի 3-րդ հարցի առթիվ՝ զեկույցը ներկայացրեց Դիանա Գասպարյանը:

Ներկայացնելով Էջմիածին համայնքի 2021թ. տարեկան բյուջեի կատարման մասին նախագիծը:

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր տալու համար ավագանու անդամներ չհերթագրվեցին: Ավագանու անդամների մտքերի փոխանակման և հարցի քննարկման ավարտից հետո նախագահողը առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության:

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 24 անդամ

Քվեարկության արդյունքները՝	կողմ - 24
	դեմ – 0
	ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

Վաղարշապատ համայնքի ավագանին ընդունում է թիվ 22 որոշումը:

Օրակարգի 4-րդ հարցի առթիվ՝ զեկույցը ներկայացրեց Դիանա Գասպարյանը:

Ներկայացնելով Ոսկեհատ համայնքի 2021թ. տարեկան բյուջեի կատարման մասին նախագիծը:

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր տալու համար ավագանու անդամներ չհերթագրվեցին: Ավագանու անդամների մտքերի փոխանակման և հարցի քննարկման ավարտից հետո նախագահողը առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության:

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 24 անդամ

Քվեարկության արդյունքները՝

կողմ - 24

դեմ – 0

ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

Վաղարշապատ համայնքի ավագանին ընդունում է թիվ 23 որոշումը:

Օրակարգի 5-րդ հարցի առթիվ՝ զեկույցը ներկայացրեց Դիանա Գասպարյանը:

Ներկայացնելով Վաղարշապատ համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները, դրանց իրականացման կարգը և սոցիալական աջակցության վերաբերյալ չափորոշիչները սահմանելու մասին նախագիծը:

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր տալու համար ավագանու անդամները հերթագրվեցին: Հարցերը տալու համար ըստ հերթագրման հաջորդականության՝ նիստը վարողը հայտարարեց հարց տվողների անուն ազգանունները՝ Հրաչյա Ավետիսյան, Կարինե Միքայելյան, Անդրանիկ Կարապետյան, Գևորգ Ղազարյան և Էդվարդ Ափոյան:

Հրաչյա Ավետիսյանն առաջարկ ներկայացրեց, որպեսզի չափորոշիչների 5-րդ կետի 1-ին ենթակետում 100 000 ՀՀ դրամի փոխարեն սահմանվի 150 000 ՀՀ դրամ:

Կարինե Միքայելյանն առաջարկեց որպեսզի կամավոր խնդիրների իրականացման կագում ընդգրկել հաշմանդամություն ունեցող անձնաց:

Դիանա Գասպարյանը պարզաբանեց, որ սոցիալապես անապահով և առողջական խնդիրներ ունեցող անձանց ցանկում ընդգրկված են նաև հաշմանդամություն ունեցող անձինք:

Անդրանիկ Կարապետյանն առաջարկեց չափորոշիչների 5-րդ կետի 1-ին ենթակետը փոփոխել և 100 000 ՀՀ դրամի փոխարեն նախատեսել՝ 1-ին տեղ զբաղեցնելու համար՝ 300 000 ՀՀ դրամ, 2-րդ տեղ՝ 200 000 ՀՀ դրամ և 3-րդ տեղ 100 000 ՀՀ դրամ, ինչպես նաև սահմանել սոցիալական աջակցություն մրցանակային տեղեր զբաղեցրած մարզիկների մարզիչների համար՝ ովքեր մարզչական գործունեություն են իրականացնում Վաղարշապատ համայնքում, մարզիկներին տրվող գումարի 50 տոկոսի չափով:

Գևորգ Ղազարյանն առաջարկեց չափորոշիչների 7-րդ կետում 100 000 ՀՀ դրամի փոխարեն սահմանվի 200 000 ՀՀ դրամ:

Հարց: Էդվարդ Ափոյան. չափորոշիչների 13-րդ կետում նշված՝ բնակիչ հանդիսացող, ի՞նչ նկատի ունեք, հաշվառված, մշտապես բնակվող թե փաստացի բնակվող:

Պատասխան: Գրիգոր Հարությունյան. ի նկատի է առնվում հաշվառված բնակիչը:

Ավագանու անդամների կողմից ներկայացված բոլոր առաջարկներն ընդունվեցին: Ավագանու անդամների մտքերի փոխանակման և հարցի քննարկման ավարտից հետո նախագահողը առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության:

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 24 անդամ

Քվեարկության արդյունքները՝

կողմ - 24

դեմ – 0

ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

Վաղարշապատ համայնքի ավագանին ընդունում է թիվ 24 որոշումը:

Մինչ 6-րդ հացի քննարկումը նիստը հարգելի պատճառով հեռացավ Նորայր Օհանյանը և չմասնակցեց մնացած հարցերի քննարկմանը:

Օրակարգի 6-րդ հարցի առթիվ՝ զեկույցը ներկայացրեց Գրիգոր Հարությունյանը:

Ներկայացնելով Վաղարշապատ համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 10 որոշմամբ հաստատված թիվ 2 հավելվածի մեջ փոփոխություն կատարելու մասին նախագիծը:

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր տալու համար ավագանու անդամները հերթագրվեցին: Հարցերը տալու համար ըստ հերթագրման հաջորդականության՝ նիստը վարողը հայտարարեց հարց տվողների անուն ազգանունները՝ Սևակ Խաչատրյան, Կարինե Միքայելյան:

Հարց: Կարինե Միքայելյան. Հավելավճար պարտադիր տրվելու է թե՞ ոչ:

Պատասխան: Գրիգոր Հարությունյան. հավելավճարներ այլևս չեն տրվելու:

Հարց: Ի՞նչ հաստիքացուցակ ունի Ոսկեհատը:

Պատասխան: Դիանա Գասպարյան. Ոսկեհատի հաստիքները ներառված են ընդհանուր հաստիքացուցակում:

Հարց: Սևակ Խաչատրյան. ինչո՞ւ է նախատեսված երկու օգնական և երկու խորհրդական: Առաջարկում ենք թողնել մեկական օգնական և խորհրդական:

Պատասխան: Դիանա Գասպարյան. մեկ օգնականը զբաղվելու է առտաքին կապերի հաստատման հետ կապված հարցերով, մյուսը՝ ընդհանուր հարցերով: Խորհրդականներից մեկը զբաղվելու է սպորտի զարգացման հետ կապված հարցերով, մյուսը՝ այլ հարցերով:

Հարց: Սևակ Խաչատրյան՝ ինչու է նախատեսված երկու փորձագետ հաստիքի համար տարբեր աշխատավարձեր:

Պատասխան: Դիանա Գասպարյան՝ քանի որ նախարարության առաջարկն է գործավարների հաստիքները ներկայացնել որպես փորձագետ և աշխատավարձի չափի տարբերությունը սահմանվելու է վերջիններիս գործառնություններով:

Ավագանու անդամների մտքերի փոխանակման և հարցի քննարկման ավարտից հետո նախագահողը առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության:

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 23 անդամ

Քվեարկության արդյունքները՝
կողմ – 14
դեմ – 7
ձեռնպահ – 2

Որոշումն ընդունվեց ձայների մեծամասնությամբ

Վաղարշապատ համայնքի ավագանին ընդունում է թիվ 25 որոշումը:

Օրակարգի 7-րդ հարցի առթիվ՝ զեկույցը ներկայացրեց Գրիգոր Հարությունյանը:

Ներկայացնելով Վաղարշապատ համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 11 որոշմամբ հաստատված թիվ 2 հավելվածի մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին նախագիծը:

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր տալու համար ավագանու անդամներ չհերթագրվեցին: Ավագանու անդամների մտքերի փոխանակման և հարցի քննարկման ավարտից հետո նախագահողը առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության:

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 23 անդամ

Քվեարկության արդյունքները՝
կողմ – 23
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

Վաղարշապատ համայնքի ավագանին ընդունում է թիվ 26 որոշումը:

Օրակարգի 8-րդ հարցի առթիվ՝ զեկույցը ներկայացրեց նիստը վարողը՝ համայնքի ղեկավարը:

Ներկայացնելով Վաղարշապատի համայնքապետարանի ենթակայության երաժշտական դպրոց ՀՈԱԿ-ներում 2022թ ուսման վարձերի գծով արտոնությունների մասին նախագիծը:

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր տալու համար ավագանու անդամները հերթագրվեցին: Հարցերը տալու համար ըստ հերթագրման հաջորդականության՝ նիստը վարողը հայտարարեց հարց տվողների անուն ազգանունները՝ Կարինե Միքայելյան:

Կարինե Միքայելյանն առաջարկեց արտոնություն սահմանել նաև հաշմանդամություն ունեցող երեխաների համար:

Պատասխան: Դիանա Գասպարյան. նշված հարցի շրջանակներում տվյալ առաջարկությունը չի քննարկվի:

Ավագանու անդամների մտքերի փոխանակման և հարցի քննարկման ավարտից հետո նախագահողը առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության:

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 23 անդամ

Քվեարկության արդյունքները՝
կողմ – 23
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

Վաղարշապատ համայնքի ավագանին ընդունում է թիվ 27 որոշումը:

Օրակարգի 9-րդ հարցի առթիվ՝ զեկույցը ներկայացրեց նիստը վարողը՝ համայնքի ղեկավարը:

Ներկայացնելով Վաղարշապատի համայնքապետարանի ենթակայության մանկապարտեզ ՀՈԱԿ-ներում երեխաների խնամքի համար գանձվող 2022թ վարձավճարների, «Եղիշե Թաղևոսյանի անվան գեղարվեստի դպրոց» ՀՈԱԿ-ում 2022թ. ուսման վարձերի գծով արտոնությունների մասին նախագիծը:

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր տալու համար ավագանու անդամներ չհերթագրվեցին: Ավագանու անդամների մտքերի փոխանակման և հարցի քննարկման ավարտից հետո նախագահողը առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության:

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 23 անդամ

Քվեարկության արդյունքները՝
կողմ - 23
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

Վաղարշապատ համայնքի ավագանին ընդունում է թիվ 28 որոշումը:

Օրակարգի 10-րդ հարցի առթիվ՝ զեկույցը ներկայացրեց Գրիգոր Հարությունյանը:

Ներկայացնելով Վաղարշապատ համայնքի համայնքային պաշտոն զբաղեցնող անձի և համայնքային ծառայողի վարքագծի կանոնադիրքը հաստատելու մասին նախագիծը:

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր տալու համար ավագանու անդամներ չհերթագրվեցին: Ավագանու անդամների մտքերի փոխանակման և հարցի քննարկման ավարտից հետո նախագահողը առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության:

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 23 անդամ

Քվեարկության արդյունքները՝
կողմ - 23
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

Վաղարշապատ համայնքի ավագանին ընդունում է թիվ 29 որոշումը:

Օրակարգի 11-րդ հարցի առթիվ՝ զեկույցը ներկայացրեց Լիլիթ Հակոբյանը:

Ներկայացնելով Վաղարշապատ համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 17 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին նախագիծը:

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր տալու համար ավագանու անդամներ չհերթագրվեցին: Ավագանու անդամների մտքերի փոխանակման և հարցի քննարկման ավարտից հետո նախագահողը առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության:

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 23 անդամ

Քվեարկության արդյունքները՝
կողմ - 23
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

Վաղարշապատ համայնքի ավագանին ընդունում է թիվ 30 որոշումը:

Օրակարգի 12-րդ հարցի առթիվ՝ զեկույցը ներկայացրեց Դավիթ Բադալյանը:

Ներկայացնելով ոչ բնակելի տարածքը վարձակալության իրավունքով օգտագործման տրամադրելու մասին նախագիծը:

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր տալու համար ավագանու անդամները հերթագրվեցին: Հարցերը տալու համար ըստ հերթագրման հաջորդականության՝ նիստը վարողը հայտարարեց հարց տվողների անուն ազգանունները՝ Վահրամ Ղարիբյանը:

Հարց: Վահրամ Ղարիբյան՝ 11 760 դրամ է փաստորեն դառնում վարձը, էլեկտրաէներգիայի ծախսը ներառվում է այդ գումարի մեջ:

Պատասխան: Դիանա Գասպարյան՝ այո:

Ավագանու անդամների մտքերի փոխանակման և հարցի քննարկման ավարտից հետո նախագահողը առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության:

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 23 անդամ

Քվեարկության արդյունքները՝

կողմ - 22

դեմ – 0

ձեռնպահ – 1

Որոշումն ընդունվեց ձայների մեծամասնությամբ

Վաղարշապատ համայնքի ավագանին ընդունում է թիվ 31 որոշումը:

Օրակարգի 13-րդ հարցի առթիվ՝ զեկույցը ներկայացրեց նախագահողը՝ համայնքի ղեկավարը:

Ներկայացնելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի ավագանու առաջին նստաշրջանի 1-ին նիստի գումարման օրը սահմանելու մասին նախագիծը:

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր տալու համար ավագանու անդամներ չհերթագրվեցին: Ավագանու անդամների մտքերի փոխանակման և հարցի քննարկման ավարտից հետո նախագահողը առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության:

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 23 անդամ

Քվեարկության արդյունքները՝

կողմ - 23

դեմ – 0

ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

Էջմիածին քաղաքի ավագանին ընդունում է թիվ 32 որոշումը:

Օրակարգի հարցերը սպառվելուց հետո Ավագանու նիստը հայտարարվեց փակված: